ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2026թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 594-րդ և 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Կոֆֆենետ» և «Արարշին գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առաջարկությունները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Կոֆֆենետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից որպես նվիրատվություն ընդունել ք. Երևան, Կենտրոն, Իսահակյան փողոց 7, ինչպես նաև Նալբանդյան փողոց 23/1 հասցեներում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կառուցված և սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող անշարժ գույքերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. «Արարշին գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից որպես նվիրատվություն ընդունել ք. Երևան, Կենտրոն, Իսահակյան փողոց 3/3, Իսահակյան փողոց 3/4 և Իսահակյան փողոց 3/5 հասցեներում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կառուցված և սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող անշարժ գույքերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը՝ Ընկերությունների հետ կնքելով սույն որոշումից բխող նվիրատվության պայմանագրերը:

4. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անշարժ գույքերի (այսուհետ՝ Գույք) նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո իրականացնել Գույքերի տնօրինմանն ուղղված ցանկացած գործողություն (այդ թվում՝ քանդել (ապամոնտաժել) դրանք):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևանի քաղաքի ավագանու
2026 թվականի -------- ---ի
N _____-Ա որոշման

ՑԱՆԿ
«ԿՈՖՖԵՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Հասցե	Շինության կադաստրային ծածկագիրը	Մակերես	Շինության տեսակը
1.	Իսահակյան փողոց 7	01-006-0050-0032-001	19.5քմ	Շինություն
2.	Նալբանդյան փողոց 23/1	01-006-0127-0086-001	20 քմ	Կրպակ

Հավելված N 2
Երևանի քաղաքի ավագանու
2026 թվականի --------- ---ի
N _____-Ա որոշման

ՑԱՆԿ

«ԱՐԱՐՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Հասցե	Շինության կադաստրային ծածկագիրը	Մակերես	Շինության տեսակը
1.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-007	34.7 քմ	Ջրավազան
2.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-004	10.35 քմ	Ծածկ
3.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-005	13.8 քմ	Ծածկ
4.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-001	12.6 քմ	Ծածկ
5.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-006	14.4 քմ	Ծածկ
6.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-002	12.6 քմ	Ծածկ
7.	Իսահակյան փողոց 3/3	01-006-0050-0040-003	13.2 քմ	Ծածկ
8.	Իսահակյան փողոց 3/4	01-006-0050-0041-001	33 քմ	Բար-Տաղավար
9.	Իսահակյան փողոց 3/5	01-006-0050-0042-001	12.96 քմ	Ծածկ
10.	Իսահակյան փողոց 3/5	01-006-0050-0042-002	10.38 քմ	Ծածկ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Նախագծով առաջարկվում է Երևան համայնքին որպես նվիրատվություն տալ.

1.1 Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 23/1 և Իսահակյան թիվ 7 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ «ԿՈՖՖԵՆԵՏ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքները:

1.2 Երևանի Իսահակյան փողոցի թիվ 3/3, Իսահակյան 3/4, Իսահակյան 3/5 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ «Արարշին Գրուպ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքները:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում առկա է մեծ թվով ոչ բարեկարգ և չշահագործվող շինություններով ծանրաբեռնված հողամասեր և մասնավոր սեփականատերերի կողմից նման գույքերի նվիրատվությունը համայնքին հնարավորություն է ընձեռում ապահովել դրանց ապամոնտաժումը, համայնքային հողերի ազատումն ու վերադարձը համայնքի լիարժեք տնօրինությանը, ինչպես նաև դրանց հետագա նպատակային օգտագործումը համայնքային շահերին համապատասխան՝ բարձրացնելով քաղաքային միջավայրի որակը և անվտանգությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ